

հեղանում են ոչ թե պարզապես հարսանեկան արարողության ավանդու-
թային առանձին պատկերացումները, այլ ավելի լայն՝ ընթանեկան-ամուս-
նական հարաբերությունների միջավայրի մի ամբողջ շարք փոխկապ-
կցված իրադրություններ:

Տվյալ հարցը լուծելու նպատամբ որոշակի վերաբերմունքն
ընդհանուր առմամբ բացահայտում է ավանդութային պատկերացումների
/մասնակերպի/ ողջ համակարգը, կոնկրետ դեպքում / ընթանեկան-
կենցաղային մակարդակով/ ամուսնության կազմակերպման և հարսանե-
կան հանդիսության անցկացման արարողությունը:

5. Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում
են, որ տվյալ հարցը լուծելիս հիմնական, որոշիչ գործոն է ժարիքը,
ընդ որում որքան այն մեծ է, այնքան ուժեղ է հանդես գալիս հակա-
ծուրթյունը ծնողական համաձայնության պարտադիր ավանդութային կար-
ծիքին: Համանման ներգործություն են ունենում կրթական մակարդակ
ու/սոցիալ-դասային պատկանելությունը. սեռ-հասակային կառուցվածքի
սեփականից տվյալ դեպքում սեռի գործոնը նշանակություն չունի:

6. Ամուսնության գործում ծնողական համաձայնության նպատ-
ամբ դրական և բացասական վերաբերմունքն անքակտելիորեն կապված է
որոշակի ձևով հարսանիքն անցկացնելու հետ, ընդ որում ավանդութա-
յին մասնակերպը թելադրում է նաև ավանդութային համապատասխան
ծեսեր /քավորի, ազափաշու, հարսնաքոջ և այլն/: Հենց փոխկա-
պծությունն էլ պարզորոշ ի հայտ է գալիս նաև հարսանեկան հանդի-
սության ընթացքում՝ ավանդութային կայուն պատկերացումները ոչ
միայն իրականացվում, այլև ավանդաբար ցուցադրվում են / ազգային
ժարերով հարսանիք անցկացնելու օգտին է արտահայտվել հարցված-
ների ավելի քան 70 օ/օ-ը/: Ավանդութային պատկերացումներից հեռ-
նալիս առավել նշանակալի են դառնում ամուսնության հաստատումը
կազմակերպելու նոր ձևերը, ինչպես, օրինակ՝ հարսանեկան նորձև
խնջույքը և մասնավորապես:

Ռուբեն Կարապետյան

ՄԴԱԳՏԱՑԻՈՆ ՊՐՈՑԵՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՊԱՐՓԱՆ ՄԲԲԵՐԸ

/ըստ Երևան քաղաքի բնակչության էթնոսոցիո-
լոգիական հետազոտության նյութերի/

1. Մեքենայական արտադրության զարգացման բուռն տեմպերը, որոնք

զուգակցվում են քաղաքային բնակչության արագ-ամոպ կ Գյուղում քաղաքային մշակույթի տարածմամբ, կյանքի են կոչում ազգային մշակույթի կառուցվածքային և որակական փոփոխություն: Բնակչության որոշակի տեղաբաշխումը հոգուտ քաղաքների / ՀՍՍՀ քաղաքներում ապրում է բնակչության 66 օ/օ / առաջացնում են մի շարք պրոցեսներ, որոնց մեջ կարելի է նշել ազգային մշակույթի ադապտացված առանձնահատուկ զանգվածների դրսևորումը արդի քաղաքային միջավայրում:

2. Այդ առանձնահատուկ զանգվածների դրսևորման պատճառներից են քաղաքի բնակչության ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք ունեն թե ընդհանուր, թե միայն սվյալ քաղաքին բնորոշ տարրեր, ինչպես նաև ուրբանիզացման նախօրյակին եղած սվյալ ազգության հասարակական կենցաղի ֆոնդը: Այդ ամենով է պայմանավորվում քաղաքի միջավայրի որոշ առանձնահատուկությունների առաջացումը, փոփոխությունը և զոյառուումը, որոնք բնորոշ են այդ պրոցեսին ընդհանրապես, սվյալ ազգությանը՝ մասնավորապես:

3. Քաղաքների բնակչության ձևավորման գլխավոր աղբյուրը վերաբնակիչ խմբերն են, ուստի ամեն մի քաղաքում կատարվում են այդ խմբերի ադապտացիոն պրոցեսներ, որոնց ընթացքում էլ տեղի է ունենում այդ առանձնահատուկ ապրելակերպի տարրերի ձևավորումը:

4. Ադապտացիոն պրոցեսի օրինաչափ փուլերում առաջանում են տարբեր որակի ներպարփակ մարդկային խմբեր, որոնք հիմք են հանդիսանում նշված առանձնահատուկությունների դրսևորմանը: Այդ խմբերի առաջացումը, զոյառուումը և տնտեսացումը կախված է քաղաքի սոցիալական կառուցվածքից, ժողովրդական տնտեսությանը բնորոշ զարգացման ընթացքից:

Ռուբեն Օհանջանյան

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՔՍՍՍՈՍՏԻՈՒՈՂԻԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑ

/ ԸՍՏ ԵՐԷԱՆ քաղաքի բնակչության էթնոսոցիոլոգիական
հետազոտման արդյունքների /

Ազգային հարաբերությունների վերլուծությունը կատարվում է ազգային դիրքորոշումների և ազգային ստերեոտիպերի միջոցով:

1. Գիրքորոշումը դա որոշակի գործողություն կատարելու պատրաստ լինելն է: Այն պատմականորեն ձևավորված պահանջմունքներն-